ԵՐՈՒՍԱՂԷՄ ՎԻՐԱՒՈՐ

Կը քայքայուիս միշտ առ միշտ, ո՛վ Սուրբ Քաղաք փառաւոր,
Բիրտ ձեռքերէ տրձակոսող գնդակներէ ահարկու.
Եւ ես կու լամ քեզի հետ զաւակներդ վիրաւոր,
Որոնք եղան նոխազներ՝ ի գին մահուան վրիժառու ...:

Կը յիշեմ քեզ սակայն ես, ո՛վ մայր սիրոյ, արքուքեան,
Երբ կ'որդէիր մեզ երկա՛ր՝ քու թեւերուդ տակ բարի.
Ու տակաւին ես կը զգամ բարութիւնդդ հինաւուրց.
Զոր կու տայիր բոլորին, զաւակներուդ քաջարի ...:

Սակայն այսօր ես կու լամ ի տես ցաւիդ անդարման,
Ի տես դէմքիդ վիրաւոր ու քու սիրոյդ պաշտելի,
Ուր ատենօք կ'երթայիր միշտ քու նամբէդ ոսկեման ...:

Արիացի՛ր սակայն դուն, ո՛վ իմ մայրս գաւառանց,
Չի ես գիտեմ որ կրկին դուն պիտ' յառնես զերթ փիւնիկ՝
Խոր վէրքերէդ, խոցերէդ, որ քեզ պաշտեն նո՛ր մարդիկ ...:

ՆԱԶԱՐԷԹ Պ. ՉԱՓԱՏԱՐԵԱՆ

Երուսաղէմ, 1955

ՏԻՐԱՄՕՐ ՏԱՐԻՔԸ ՓՐԿԶԻՆ ԾՆՆԴԵԱՆ ԱՏԵՆ

Այս հարցը ափ առաւ մեր մտքի դրան, երբ անցնող Սեպտեմբերի 8ին, Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի, կաթոլիկ եկեղեցին բացումը կատարեց «Մարեմական տարեւոյն», նշելու համար երկհազարամեակը Ս. Կոյսի Ծննդեան։

Ծանօթ է թէ Ս. Գրական բանասէրներէն և եկեղեցւոյ Հայրերէն շատեր այն կարծիքէն են, թէ մեր Տիրոջ Ծննդեան թուականի հաշիւին մէջ սխալմունք մը ապրած է։ Բայց հոս ալ կարծիքները համաձայն չեն։ Ոմանք կը պնդեն թէ Քրիստոսի Ծնունդը մեր թուականէն 4 տարի առաջ տեղի ունեցած է, իսկ ուրիշներ՝ 4 տարի յետոյ, յենելով ատաղաքիտական հաշիւներու։

Անցեալ տարի, երբ կաթոլիկ եկեղեցին նշեց մեր Տիրոջ խաչելութեան և յարութեան 1950ամեակը, «Միոնի էջերէն մեկնցած էինք այս հարցին, մեր Ցայսմաւուրքին վկայութեամբ պաշտպանելով երկրորդ տեսակէտը։ Ներկայ Ցոբելեանը կու գայ ուրեմն ամրապնդելու մեզ այս տեսակէտին շուրջ, վասնզի առաջին պարագային, 16էն (2000 – 1984 = 16), 4ը զնդչելով՝ կ'ունենանք 12, ինչ որ չի կրնար ըլլալ թիւը Ս. Կոյսի կեանքի տարիներուն, երբ ծնունդ կու տար մեր Փրկիչին։ Մինչ 4ը միւս կողմ ձգելով՝ կ'ունենանք 20, ինչ որ էր շատ հաւանաբար տարիքը Տիրամօր՝ հրաշալի այդ դէպքի տեղն։ Մնաց որ կաթոլիկներ խօսք չեն ըներ 4 տարիներու մասին, ոչ յայտնոյս և ոչ յայտնոյս, և մեր թուականի ճշդութեան վրայ հիմնուելով, կը ներկայացնեն Ս. Կոյսը իբրև 15–16 տարեկան պարմանուհի մը, երբ ընդունեց մեծ աւետիսը և ծնաւ Աստուածորդին։

Գ.

digitised by A.R.A.R.@